ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ ականավոր գրականագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Ներսեսի Սարինյանի ծննդյան 75-ամյակը:



ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 1999 թվականի վերջին միջոցառումը, որ համատեղ կազմակերպել էին ինստիտուտի գիտական խորհուրդն ու տնօրինությունը, նվիրված էր վաստակաշատ գիտնականին: 1999 թ. Սերգեյ Սարինյանի համար կրկնակի հոբելյանական էր, քանի որ ծննդյան 75-ամյակը համընկնում էր գիտական գործունեության 50-ամյակին: Դա ըստ ամենայնի հոբելյանական տարեթիվ էր նաև գրականության ինստիտուտի համար, որովհետև մեր ժամանակների ամենահեղինակավոր գրականագետներից մեկն իր գիտական ներուժն ու կարողությունները գրսևորել է այստեղ, ստեղծել հիմնարար ուսումնասիրություններ, պատրաստել բազմաթիվ լրջմիտ գրականագետներ: Ուստի պատահական չէ, որ գրականության ինստիտուտի դեկտեմբերյան այդ նիստը ոչ միայն արժևորում ու հանրագումարի էր բերում Սարինյանի գործն ու վաստակը, այլև, որոշակի առումով, ընդհանրացնում կեսդարյա գրականագիտության փորձը:

Փաստ է, որ Սերգեյ Սարինյանը հայոց նոր գրականության պատմությանը, գեղարվեստական դործընթացի համակարգված քննաքանությանը, գրական երկի տիպաբանությանը, գաղափարների համակարգին, ստեղծագործության վերլուծության մեկնաբանական եղանակին, գրականագիտության մեթոդաբանության հիմնախնդիրներին, քննադատության արդիական և խնդրագիր հիմնահարցերին նվիրված իր բազմաթիվ մենագրություններով, ուսումնասիրություններով, հետազոտություններով, ակնարկներով և հոդվածներով ժամանակակից գրականագիտության մակարդակը պայմանավորողներից է: Անպայմանորեն դեռ պետք է ըստ ամենայնի փաստարկվի և մանրամասնվի նրա դերը ժամանակակից գրականագիտության մեջ: Սոսկ մատնանշենք Սարինյանի կարևոր դերակատարությունը գրականության պատմագրության, գրական հոսանքների և ուղղությունների քննության, տեսական ամենատարբեր խնդիրների լուսաբանության ասպարեզում: Միայն «Հայ նոր գրականության պատմության» հինգհատոր և «Հայ քննադատության պատմության» երկհատոր հիմնարար ուսումնասիրությունները, որոնք ստեղծվել են Ս. Սարինյանի

գիտական ղեկավարությամբ, խմբագրությամբ և հեղինակակցությամբ, ասածի պերճախոս վկայությունն են:

Սերգեյ Ներսեսի Սարինյանը ծնվել է 1924 թ. նոյեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սեյդիշեն գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1941—1942-ին հայրենի գյուղում աշխատել է իբրև ուսուցիչ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1943 թ. ռազմաճակատում վիրավորվելուց, զորացրվելուց և ապաքինվելուց հետո ընդունվել է Երևանի համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1949 թ. համալսարանն ավարտելուց հետո մինչև 1952 թ. ուսանել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1952-1960 թթ. գիտաշխատող էր, իսկ 1960 թ. ցարդ՝ ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի վարիչը, այնուհետև՝ հայ նոր գրականության պատմությունն ուսումնասիրող խմբի գիտական ղեկավարը: Ս. Սարինյանը Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ է, ՀՍՍՀ պետական մրցանակի գափնեկիր:

Ս. Սարինյանը 1953 թ. «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» թեմայով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն: Համանուն մենագրությանը հաջորդում է Րաֆֆիին նվիրված նրա առաջին մենագրությունը 1957-ին, որը բաֆֆիագիտության ասպարեզում ոչ միայն հայ դասական վիպասանի, այլև 1870-1880-ականների գրականության պատմության վերարժևորման շրջագարձ էր: 1985 թ. լույս տեսավ «Բաֆֆի: Գաղափարների և կերպարների համակարգը» մենագրությունը, ինչն ամբողջացրեց գրողի գրական ժառանգության գիտական ուսումնասիրությունը: 1967 թ. անվանի գրականագետը պաշտպանեց «Հայկական ռոմանտիզմ» դոկտորական թեզը, ինչին նախորդել էր իր տեսակի մեջ եզակի, բարձրարժեք մենագրությունը նվիրված հայկական ռոմանտիզմի տեսությանն ու պատմությանը: Այս գրքի օրգանական շարունակությունն է «Մուրացան (տիպաբանությունը, էտիկան, պատմության փիլիսոփայությունը)» ուսումնասիրությունը: Անպայմանորեն պետք է հիշել գրականագետի Լևոն Շանթին նվիրված մենագրությունը, որը Ս. Սարինյանի դիմանկարային հետազոտությունների խորին հարցադրումներով, խնդրադրությամբ կարևոր աշխատանքներից է:

Ինչպես «Գրական դիտողություններ», «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը», «Գեղարվեստական գրականության պատմականությունը», «Սերունդներ և ավանդներ», «Հայոց գրականության երկու դարը» (երկհատոր) ուսումնասիրությունների, ակնարկների և հոդվածների ժողովածուներ, այնպես էլ Պերճ Պռոշյանին, Սրբուհի Տյուսաբին, Ատոմ Յարճանյան-Սիամանթոյին, Վահան Տերյանին և այլոց, հայ նոր գրականության և քննադատության պատմության տարբեր պատմատեսական խնդիրներին, ժանրային համակարգին, պոետիկային նվիրված սարինյանական վերլուծությունները դասական և ժամանակակից հայ գրականության գիտական քննության հանգուցային երևույթներից են:

Ս. Սարինյանը առաջինը մեզանում 1998-ին լույս ընծայեց «Հայ գաղափարաբանություն. պատմաքննական տեսություն» գիրքը, ուր ցույց տվեց իր գիտական հետաքրքրությունների բոլորովին նոր ոլորտ՝ միջառարկայական խնդիրների ուսումնասիրություն:

Երկրորդենք, որ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գործն ապագայում անպայմանորեն ակադեմիական արժևորում կստանա, նրա վաստակը հետազոտական կիզակետում կգտնվի: Մեր այս դնահատանքի խոսքը եզրափակենք կրկին շնորհավորելով սիրելի գիտնականին, մարդուն և ազնիվ քաղաքացուն նրա 75-ամյա տարելիցի առթիվ:

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ